



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Steve Frintner, President
Charlene Tabet, Vice President
Steve Ferguson, Clerk
Dr. Emily Weisberg
Dr. Armond Aghakhanian

Superintendent
Matt Hill, Ed.D.

Փետրվարի 25, 2021

ԲԴՄՇ-ի հարգելի աշակերտներ, ընտանիքներ և աշխատակիցներ.

Մենք լավ նորություն ենք ստացել այն մասին, որ մարտի 1-ից սկսած, դպրոցական շրջանի բոլոր աշխատակիցները կկարողանան պատվաստում ստանալ: Լուս Անջելեսի գավառի հանրային առողջապահության գրասենյակը հայտնել է, որ պատվաստումների քանակը դեռ սահմանափակ է: Աշխատակիցները հնարավորություն կունենան ժամադրություն վերցնել գավառի կողմից ստասարկվող վայրերում, անձնական բժշկի մոտ կամ Բրբենք քաղաքի համագործակցության միջոցով: Ես ցանկանում եմ շնորհակալություն հանձնել մեր հրաշալի բուժքույրերին, քանի որ համաձայնվել են համագործակցել Բրբենքի քաղաքի հետ և կատարել պատվաստումները: Հենց որ Բրբենք քաղաքը տեղեկանա, թե շաբաթական քանի պատվաստում հնարավոր կլինի կատարել, մենք կտեղեկացնենք մեր աշխատակիցներին: Հաշվի առնելով պատվաստումների սահմանափակ քանակը, մենք առաջնահերթությունը կտանք այժմ անձամբ դպրոցներում աշխատողներին: Մենք կշարունակենք տեղեկացնել մյուս աշխատակիցներին, երբ պատվաստման նոր դոզաներ ստանանք: Միևնույն ժամանակ, մենք կշարունակենք պահանջել գավառից և նահանգից, որ առաջնահերթությունը տրվի դպրոցների աշխատակիցներին, որպեսզի կարողանան հնարավորինս չափ շուտ պատվաստանյութ ստանալ:

Ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր աշխատակիցներին այս ուսումնական տարվա ընթացքում աշակերտների հանդեպ ցուցաբերած իրենց նվիրվածության համար: Այն պրետսային և անընդհատ փոփոխվող տարի էր մեր աշխատակիցների, աշակերտների և ընտանիքների համար: Լսելով այլ լավ լուրը, ես անհամբերությամբ եմ սպասում ավելի շատ աշակերտների անձամբ դպրոց վերադարձնելով:

Ցանկանում եմ նաև շնորհակալություն հայտնել մեր ընտանիքներին շարունակական հաղորդակցությունների և աշակերտների լավագույն աջակցության համար: Ես ընդունում եմ, որ հեռակա ուսուցումը լավ է աշխատում որոշ աշակերտների համար, բայց ոչ բոլորի: Ես լսում և հասկանում եմ ձեր մտահոգությունները անձամբ դպրոց չհաճախելու երեխաների վրա թողած մեկուսացման հետևանքների մասին: Մենք շարունակում ենք ընդլայնել անձամբ միջոցառումները և պլանավորում ենք ապագայում ավելի շատ աշակերտների ընդգրկել: Ահա մեր կատարած առաջընթացը:

- **Կրթական պատիճներ.** Մենք երկարացրել ենք Չանգի շուրջ (ATB), ASES ծրագրերի ժամերը և աշխատել մեր գործընկերներ՝ YMCA, Տղաների և աղջիկների ակումբի և Արտադասարանական դեյթի (Afterschool Daze) հետ նույնը կատարելու համար:

- **Հատուկ ուսուցման կրթական պատիճներ.** Մենք դիմել ենք ընտանիքներին, որպեսզի մարտի 8-ից սկսած, երեխաները սկսեն հաճախել Հատուկ ուսուցման կրթական պատիճներ ծրագիրը: Լրացուցիչ երեխաներ կսկսեն հաճախել մարտի 29-ից սկսած:
- **Կրթական միջամտություն.** Մենք հրավիրել ենք աշակերտներին առցանց կամ անձամբ մասնակցել միջամտության դասընթացների: Մենք շարունակում ենք ընդլայնել անձամբ միջամտության դասընթացները:
- **Սպորտ.** Ուրբաթ օրը, թարմացվել են պատանեկան սպորտաձևերի պետական ուղեցույցները: Մեր դպրոցներն աշխատում են, որ ավելի շատ մարզական միջոցառումներ ունենան դպրոց վերադառնալիս:
- **Տարեվերջյան միջոցառումներ.** Այրիլ ամսվա սկզբին, Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահական կենտրոնը կհայտնի ավարտական և փոխադրման հանդեսների իր ուղեցույցները: Մենք նախատեսում ենք, որ աշակերտներն անձամբ մասնակցեն `սահմանափակ հյուրերով և հետևեն առողջապահական ուղեցույցներին: Եթե առողջապահական պայմանները/ուղեցույցները փոփոխվեն, մենք կիրականացնենք մեր փոփոխված ծրագրերը (օրինակ` ավարտական/փոխադրման հանդեսները կկատարենք ավտոմեքենաների մեջ նստած): Հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում, դպրոցի տնօրենները ձեզ հայտնելու ավելի շատ տեղեկություն կունենան:
- **Ամառային դպրոց.** Գարնանային արձակուրդից հետո, մենք ավելի շատ տեղեկություն կունենաք ամառային դպրոցի վերաբերյալ: Ներկայումս պլանավորում ենք ունենալ ընդլայնված ամառային դպրոց: Մեր նախընտրում ենք, որ երեխաներն անձամբ հաճախեն, բայց մշակում ենք հիբրիդ և հեռակա ուսուցման մոդելներ, եթե առողջապահական պայմանները թույլ չտան անձամբ հաճախել:

Նորություններ տարրական դպրոցների վերաբերյալ

Ես բազմաթիվ պահանջներ եմ ստացել տարրական դպրոցները բացելու վերաբերյալ: Երբ ամռանը և աշնանաը մենք մշակում էինք մեր ծրագրերը, մենք ուսումնասիրեցինք կրթական տարբեր մոդելներ, որոնք այժմ իրականացնում են դպրոցական այլ շրջանները: Պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր մոդել ունի իր դրական և բացասական կողմերը: Դպրոցական այլ շրջաններ օգտվում են հիբրիդ մոդելից.

- Վերադասավորում ենք դասարանները և աշակերտներից շատերը կհամայնակի կեսից նոր ուսուցիչ են ստանում:
- Աշխատանքի են հրավիրում փոխարինող ուսուցիչների կամ
- Ուսուցիչները լրացուցիչ տեսախցիկների օգնությամբ միաժամանակ դասավանդում են երկու տարբեր խմբի աշակերտների. տանը և դպրոցում:

Դպրոցական որոշ շրջաններ օգտվում են այլ մոդելներից, բայց մենք չենք կարծում, որ փոխելով ուսուցիչներին կամ նոր տեխնոլոգիայի կամ դասավանդման մոդելով կկարողանանք բավարարել աշակերտների սոցիալ հուզական, հոգեկան կամ կրթական կարիքները, քանի որ ուսումնական տարվա վերջին մնացել է 9 շաբաթ: Մենք կարծում ենք, որ մենք կարող ենք աշխատել մեր ուսուցիչների հետ և իրականացնել մի մոդել, որ թույլ կտա ավելի շատ անձամբ շփում ունենալ և պահպանել մեր կրթական ծրագիրը մինչև ուսումնական տարվա վերջը:

Կարևոր է նաև նշել, որ դաշնային և նահանգային ղեկավարությունը դեռ պահանջում է, որ աշակերտները հանձնեն քննություններ: Այդ քննությունները տեղի կունենան մարտ և ապրիլ ամիսների ընթացքում: Պարտադիր այս քննությունները կրթական, ինչպես նաև սոցիալ հուզական դասավանդման ժամ կիսկեն աշակերտներից:

Վերջում ցանկանում եմ ավելացնել, չնայած, որ մենք իրականացնում ենք անվտանգության չափանիշներ և մեղմացնում ենք վարակի տարածումը մեր [COVID կանխարգելու ծրագրի](#) շնորհիվ, այունամենայնիվ դեռ ունենում ենք վարակվածներ: Խնդրում ենք սեղմել այստեղ՝ մեր [տեմպերի](#) հետ ծանոթանալու համար: Այդ դեպքերից բխող բռնկումներ դեռ չենք ունեցել, քանի որ ամեն մի դեպքից հետո 10-14 օրով փակում ենք այդ դասարանը կամ կրթական պատիճը: Փակելով դասարանը մենք խափանում ենք կրթական ժամը, որը ցանկանում ենք մեղմել:

2021-22 ուսումնական տարվա ծրագրերը

Քանի որ ավելի շատ պատվաստումներ են կատարվում և վարակն արդեն նվազում է, մենք պլանավորում ենք, որ աշակերտները օգոստոսին անձամբ դպրոց վերադառնալով սկսեն 2020-2021 ուսումնական տարին: Ավելի ուշ, գարնանը, մենք նորից կխնդրենք դպրոցները վերաբացելու կոմիտեին սկսել իր աշխատանքները և ծրագիր մշակել ուսումնական տարին ավանդական մոդելով սկսելու համար կամ պատրաստ լինել կիրառելու հիբրիդ մոդելը, եթե առողջապահական պայմանները չբարելավվեն:

Վերջում ցանկանում եմ ավելացնել, որ ես գիտակցում եմ, որ բոլորս էլ ցանկանում ենք բացել դպրոցները, բայց պետք է հասկանանք, թե ինչպիսին է այն լինելու և ինչպես ենք այն կատարելու անվտանգ կերպ: Հատուկ կերպ ասաց, ես լսել եմ, որ մենք պետք է ավելի շատ անձամբ կրթական աջակցություն և սոցիալ հուզական հնարավորություններ ցուցաբերենք աշակերտների համար:

Հոգատարությամբ,

Դոկտոր Մաթ Հիլլ
Գերատեսուչ